ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՄԱՅԻՍԻ 2024թվականի N 0646-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ Խաժակ Պողոսի Զաքարյանի կողմից կառուցված Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Երևանյան փողոց 56/6-ին կից 225,29 քմ արտաքին և 215,85 քմ ներքին մակերեսով չափերով (մեկ հարկանի) ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, նկատի ունենալով, որ ինքնակամ կառույցը կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման ու անվտանգության գոտիներում և քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև ելնելով այն հանգամանքից, որ ինքնակամ կառույցը համապատասխանում է հաստատված պետական կամ համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերի նախատեսված գոտիներում գտնվող կառույցների ծրագրերի պայմաններին, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի N 600-Ն որոշման 1-ին հավելվածի 4-րդ կետով,Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 57-րդ հոդվածի 1-ին մասի 1.1 կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի N 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հուլիսի 4-ի թիվ 1023-Ն որոշմամբ հաստատված հավելվածների, ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված 24-րդ կետի 3-րդ ենթակետով, հիմք Խաժակ Պողոսի Զաքարյանի 22.04.2024թ. թիվ 2553 դիմումը և դրան կից ներկայացրած փաստաթղթերը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնքի սեփականություն հանդիսացող՝ Արմավիր քաղաքի Երևանյան փողոցի 56/5-ին կից 04-001-0075-0044-ից կադաստրային ծածկագրում գտնվող 225,29 քմ արտաքին և 215,85 քմ ներքին մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության՝ օբյեկտների

գործառնական նշանակության հողամասում կառուցված ինքնակամ կառույցը՝ հասարակական նշանակության՝ ծածկը՝ 65,2 քմ մակերեսով,պարսպը՝ 4,3 քմ արտաքին և 0,2 քմ ներքին մակերեսով,ավտոլվացման կետի՝ 53,4 քմ արտաքին և 48,7 քմ ներքին մակերեսով,սպասասրահը՝ 66,0 քմ արտաքին և 61,3 քմ ներքին մակերեսով,ծածկը՝ 21,6 քմ մակերեսով և ծածկը՝ 18,7 / ստորև նաև գույք / համարել Արմավիր համայնքի սեփականությունը և ճանաչել օրինական (կցվում է հողամասի հատակագիծն ու շինության բնութագիրը):

2. Գույքին տրամադրել հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնք Արմավիր քաղաք Երևանյան փողոց 56/3:

3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Արմավիր քաղաք Երևանյան փողոց 56/3 հասցեում գտնվող գույքի հաշվառման (չափագրման)տվյալների մուտքագրման ծածկագիրն է 2024GZKEDP:

4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝երկամսյա ժամկետում:

5. Ուժը կորցրած ճանաչել 2024 թվականի ապրիլի 18-ի թիվ 0570-Ա որոշումը:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ.ՍԱՐԳՍՅԱՆ

2024 թ. մայիս 14
ք. Արմավիր